պասը նախորդում էր Զատկին, բնության վերակենդանության ձոնված օրին։ Բնության մահվան շրջանի վերջին օրերի հետ և վերածնվող բնության սպասողության հետ շաղկապվում էր համայնքի բոլոր ննջեցյալներին պատվելու օրը, որպես մոգական միջոց մահացած բնության անոխակալ հեռանալն դյուրացնելու և վերածնվող բնության գալուստի ճանապարհը հարթելու համար։ Այդ օրվա հասարակական ճաշկերույթը եկեղեցու գավթում լրացնում և ամբողջացնում էր իր ծագումով այն բարեկենդանական ուրախությունները, որոնցով ողջունվում էր նոր բնության մոտալուտ գալուստը և ապահովվում ու խրախուսվում էր նրա «բարեկենդանանալը», բարեկենդանը։

Մեծ պասի առաջին օրը բոլոր գյուղացիք տանում էին կերակուրներ և խմիչքներ եկեղեցու գավիթը, այնտեղ աղէրը բոլոր ննջեցյալների համար ընդհանուր հոգոց էր ասում, ապա բոլորը խառը նստում էին և բերածներն ուտում[103]։ Ապա ամեն մեկը գնում էր գերեզմանատուն և աղէրին իր ննջեցյալների գերեզմաններն էր օրհնել տալիս։

Ննջեցյալների համայնական հարգումը կապված էր Զատկի հետ, այն է նոր կյանքի արդեն արթնացած լինելու տոնի հետ։ Այս անգամ հատուկ հանձնաժողովի միջոցով համայնքի անդամներից նվիրաբերություններ էին հավաքում։ Դրանք տրվում էին կամ դրամով կամ մթերքով, որը հետո վաճառելով՝ դրամի էր վերածվում։ Գնվում էր մի եզ կամ արջառ և մատաղ էր մորթվում։ Միսը կոտորում՝ եփում էին և թիֆանէրը՝ կտորները[104] լավաշի մեջ փաթաթած դնում էին մի սինու վրա՝ զատկական պատարագի ժամանակ սուրբ սեղանի առջև, որ «պատարագի տակով» լինի և ապա նախ աղէրը, սարկավագը, տիրացուները և այնուհետև բոլոր ժամավորները մի-մի «մաս» էին վերցնում և տուն տանում։ Հաջորդ օրը գնում էին գերեզմանատուն և ամեն մեկը օրհնել էր տալիս աղէրին իր ընտանիքի ննջեցյալների գերեզմանները։ Այս մատաղը կոչվում էր ախար, որի արյան մեջ թաթախած ճյուղը ստանում էր մոգական զորություն՝ արտի մեջ ցցված այդ ճյուղը պահում էր ցանքը մորեխից, մկներից և չար աչքից[105]։

---

103 Այսինքն՝ ննջեցյալներին կերակրում։

104 Երբեմն մսի կտորները դնում էին առանց փաթաթելու և կողքին կտրտած լավաշը, որ ամեն մեկը ինքը միսը վերցնի և ինքը փաթաթի լավաշի մեջ։

105 Ախար էր կոչվում և այն ոչխարը կամ գառը, որը Զատկի օրը տղատերը ուղարկում էր աղջկա տիրոջ։ Դա պիտի երեք անգամ, ինչպես և հասարակական ախարը, շրջեցնեին եկեղեցու շուրջը, աղէրի օրհնած աղը ուտեցնեին և այնուհետև աղջկա տանը մորթեին։ Այդ ախարը ուտվում էր հրավերքին, որ աղջկա տերը սարքում էր տղատիրոջ և նրա մերձավորների համար, բայց որին ինքը տան տղան չէր կարող ներկա գտնվել։ Ախար ուղարկվում էր աղջկան այն նպատակով, որ նա էլ բեղմնավոր լինի, որպես սպասվում էր, որ պիտի լինի Զատկի հետ իր իշխանության մեջ մտնող նորոգված վերակենդանացած բնությունը։ Այսպիսով Մեծ պասի առաջին օրվա ընդհանուր ճաշկերույթը աչքի առաջ ուներ նպաստել բնության վերակենդանանալուն, իսկ ախարը բաժանում էր արդեն վերակենդանացած բնության զորությունը զոհաբերությանը մասնակցածների միջև, պահում էր նրանց արտերը վնասումներից, իսկ հարսնացուի մեջ ուժեղացնում էր նրա բեղմնավորվելու ընդունակությունը։ Պիտի նշել և այն, որ ախար բառը նշանակում է և հայր, հայրիկ։ Տես՝ ախար (2) Մալխասեանց Ստ., Հայեր. բաց. բառ. Հատ. I, էջ 19։ Ուրեմն եզ-ախարը՝ եզ-հայրիկը նախկին տոտեմի կերպարն էր։ Զատկին եզին-ախարին-հայրիկին-նախնիքին-տոտեմին մատաղ բերելն ամբողջ համայնքով և միասին այն ճաշակելը մնացորդ է հինավուրց տոտեմական հասարակական ճաշկերույթների, երբ համայնքի ամեն մի անդամ պիտի ճաշակեր տոտեմի միսը։ Դա հաղորդության ամենահին ձևն էր։